
Մամլո հաղորդագրություն

ՀԲԸՄ-Ն ԱՄՓՈՓՈՒՄ Է ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵԿՆԱՐԿԻՆ ՀԱԶՈՐԴՈՂ ՄԵԿՏԱՐԻՆ

27 սեպտեմբեր 2021թ.

Ենթակա է անհապաղ հրապարակման

2020թ. սեպտեմբերի 27-ին հայկական աշխարհը բախվեց Հայրենիքի ազգային անվտանգության պահպանման խնդրին: Ճակատագրական այդ օրից ի վեր, Հայաստանի և Արցախի ժողովուրդները բազմաթիվ փորձությունների միջով են անցնում: ՀԲԸՄ-ն մաղթում է նրանց տոկունություն և մխիթարանք Արցախյան երկրորդ պատերազմից ապաքինվելու դժվարին ճանապարհին:

Մտորելով այս վշտալի իրադարձության մասին՝ ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանն ասել է. «Այս օրն, անկասկած, կհիշվի որպես հայոց պատմության տխուր էջերից մեկը: Բայց այսօր ՀԲԸՄ-ն կենտրոնանում է այն մարդկանց վրա, որոնք 44 օր շարունակ դիմակայել են թշնամու անմարդկային դաժանություններին: Մեր մտքերը նաև այն ընտանիքների հետ են, որոնք կորցրել են իրենց սիրելիներին պատերազմի դաշտում կամ եղել և շարունակում են լինել պատերազմական հանցագործությունների գոհ՝ այդ թվում նաև պատերազմի գերիները, որոնք դեռ պահվում են միջազգային և մարդու իրավունքների կոպիտ խախտմամբ:

Հարգելով մեր բոլոր քաջ նահատակների հիշատակը, որը մշտապես վառ կմնա ողջ հայ ազգի հիշողության մեջ՝ մենք մեր սրտերում ամուր ենք պահում նաև ծանր վիրավորում ստացած մեր հերոսներին»: Մինևույն ժամանակ ՀԲԸՄ-ն արժևորում է ճգնաժամի մեջ գտնվող հայերին աջակցելու հայկական համերաշխության խոր զգացումը, որը դրսևորվել է սփյուռքի մեր նվիրատուների, կամավորների, աջակիցների, գործընկերների և ընկերների կողմից: Միասին նրանք իսկապես մարմնավորում են ՀԲԸՄ-ի հավերժական կարգախոսը՝ «Միությունը զորություն է»:

ՀԲԸՄ-ի և իր աշխարհասփյուռ ծրագրերի մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար կարող եք այցելել www.agbu.org:

Լրատվական հարցումների համար դիմել՝

ՀԲԸՄ մամուլի գրասենյակ

55 East 59-րդ փողոց

Նյու Յորք, NY 10022-1112

Հեռախոս՝ 212.319.6383

Էլ. փոստ՝ communications@agbu.org